

Կառավարության քաղաքականությունը՝ որպես առևտուր պայմանավորող գործոն

Արտաքին առևտուրը պայմանավորող գործոններ են տեխնոլոգիաների տարբերությունը, ռեսուրսների համեմատական առատությունը, ծավալի էֆեկտը, նախապատվությունների տարբերությունը և այլն: Սակայն, որպես արտաքին առևտուրը պայմանավորող գործոն կարող են հանդես գալ նաև ներքին աղճատումները, մասնավորապես՝ հարկերն ու լրավճարները: Հարկերն ու լրավճարները պարզապես օրինակ են կառավարության քաղաքականության, որոնք կարող են ազդել առևտրի վրա: Նման օրինակ են նաև արտանետումների սահմանափակումը, ապրանքների տեխնիկական չափանիշերը, նվազագույն աշխատավարձը և այլն, որոնք ազդում են արտադրության ծախսերի վրա և, հետևաբար, թողարկման ու առևտրի վրա, ճիշտ այնպես, ինչպես հարկերն ու լրավճարները:

Անշուշտ, կառավարության քաղաքականությունը չի կարող լինել արտաքին առևտուրը պայմանավորող նույնքան վճռորոշ գործոն, որքան արտադրողականությունների տարբերությունն է կամ ռեսուրսների համեմատական առատությունը: Սակայն, տարբեր ոլորտներում կառավարության քաղաքականության գումարային ազդեցությունը արտաքին առևտրի վրա շատ ավելի նշանակալի է, քան ընդունված է համարել:

Հարկերի և լրավճարների ազդեցությունը արտաքին առևտրի վրա հստակորեն դիտարկելու համար անհրաժեշտ է բոլոր մյուս գործոնների ազդեցությունը չեզոքացնել: Այդ նպատակով կենթադրենք, որ (1) երկու երկրները միմյանց լիովին նման են (տեխնոլոգիաներ, ռեսուրսառատություն, միասեռ անտարբերության կորեր), (2) ծավալի էֆեկտը հաստատուն է, (3) շուկաները կատարյալ մրցակցային են: Ավելին, կենթադրենք, որ ազատ առևտրի հավասարակշռությունը համընկնում է ավտարկիայի հավասարակշռությանը, այսինքն՝ երկրները առևտուր կատարելու որևէ շարժառիթ չունեն:

Սպառողի, արտադրողի և միջազգային գներ

Երբ վերլուծությունում ներառում ենք հարկերն ու լրավճարները, ապա արտադրողի և սպառողի համար միևնույն ապրանքի գինը դառնում է տարբեր: Արտադրողի գինը նշանակենք p , սպառողի գինը՝ q , իսկ միջազգային գինը՝ p^* :

Ենթադրենք նաև, որ պետական հատված չկա: Կառավարությունը հարկերը ամբողջությամբ և միանգամից ետ է վերադարձնում սպառողներին, ընդ որում դա իրականացնում է այնպես, որ սպառողները իրենց գումարները չեն կապում իրենց հարկման հետ: Այսինքն՝ թեպետ սպառողների կողմից վճարված հարկը ամբողջությամբ ետ է վերադարձվում իրենց, սակայն յուրաքանչյուր սպառող համարում է, որ հարկը բարձրացնում է ապրանքների գները:

Լրավճարները, նույնպես, հավաքվում են միաժամանակյա հարկմամբ և արտադրողներին տրամադրվում են այնպես, որ յուրաքանչյուր արտադրող իր հարկումը չի կապում չի կապում իր արտադրության հետ: Այսինքն՝ թեպետ արտադրողներին վճարվում է ճիշտ այնքան լրավճար, որքան հարկ է հավաքվում, սակայն, յուրաքանչյուր արտադրող համարում է, որ լրավճարը նվազեցնում է ապրանքի գինը:

Արտադրողի և սպառողի գների միջև կապը արտահայտվում է հետևյալ հավասարումներով.

$$(1) \quad q = p(1 + t) > p \quad \text{հարկ}$$

$$(2) \quad q = p(1 - s) < p \quad \text{լրավճար}$$

որտեղ t -ն հարկի դրույքն է, իսկ s -ը՝ լրավճարի:

Հարկի դեպքում սպառողի գինը ավելին է, քան՝ արտադրողի գինը, իսկ լրավճարի դեպքում՝ հակառակը: Երբ դիտարկում ենք միայն երկու ապրանք, ապա մի ապրանքի վրա հարկ սահմանելու ազդեցությունը համարժեք է մյուս ապրանքի համար լրավճար տրամադրելու ազդեցությանը: Այսպես՝ Y -ի վրա հարկ սահմանելու և X -ի համար լրավճար տրամադրելու ազդեցությունը հարաբերական գների վրա հետևյալն է.

$$(3) \quad \frac{q_x}{q_y} = \frac{p_x}{p_y(1+t)} < \frac{p_x}{p_y} \quad \text{հարկ } Y - \text{ի վրա}$$


$$(4) \quad \frac{q_x}{q_y} = \frac{p_x(1-s)}{p_y} < \frac{p_x}{p_y} \quad \text{լրավճար } X - \text{ի համար}$$

Ակնհայտ է, որ Y -ի վրա հարկը և X -ի համար լրավճարը արտադրողի և սպառողի հարաբերական գների միջև նույն ճեղքվածք են առաջացնում:

Գրաֆիկ 1-ում Q կետը արտահայտում է A երկրում ավտարկիայի հավասարակշռությունը՝ նախքան հարկ սահմանելը կամ լրավճար տրամադրելը (կասենք՝ Q -ն չաղճատված հավասարակշռության կետն է): Իսկ E կետը ցույց է տալիս նույն ավտարկիայի հավասարակշռությունը, երբ Y -ի վրա սահմանված է հարկ կամ X -ի համար տրվում է լրավճար (կասենք՝ E -ն աղճատված հավասարակշռության կետն է): Այն, որ E կետում արտադրության ու սպառման համախմբերը համընկնում են, արդյունք է նրա, որ հարկերը ետ են վերադարձվում միաժամանակյա սկզբունքով, իսկ լրավճարները, նույնպես, հավաքվում են միաժամանակյա հարկման միջոցով: Հարկի հետևանքով սպառողները վճարում են ավելի, քան արտադրողները ստանում են, բայց, քանի որ հարկը ամբողջությամբ վերադարձվում է, ապա սպառողների ծախսերը հավասարվում են սպառողների եկամուտներին (արտադրողները միևնույն ժամանակ սպառող են): Նշանակենք՝ c և p ինդեքսներով համապատասխանաբար սպառման և արտադրության քանակները: Y -ի վրա հարկ սահմանելու դեպքում.

$$(5) \quad q_x X_c + q_y Y_c = p_x X_p + p_y(1+t)Y_p = [p_x X_p + p_y Y_p] + [p_y t Y_p]$$

Գրաֆիկ 1:
Հարկ Y -ի վրա կամ լրավճար X -ի համար



Հավասարում 5-ի ձախակողմյան արտահայտությունը ցույց է տալիս սպառողների ծախսը: Աջակողմյան առաջին փակագծում ներառված արտահայտությունը արտադրությունից ստացված հասույթն է (ռեսուրսների վարձատրությունը), իսկ երկրորդ փակագծում ներառված արտահայտությունը վերաբաշխված հարկն է: Դրանով իսկ սպառողների ծախսերը հավասարվում են սպառողների եկամուտներին:

Լրավճարի դեպքում անհրաժեշտ է փոխել միայն t -ի նշանը:

Գրաֆիկ 1-ը նկարագրում է Y -ի վրա հարկ սահմանելու կամ X -ի համար լրավճար տրամադրելու աղճատող ազդեցությունը: Բարեկեցությունը E -ում ակնհայտորեն փոքր է, քան Q -ում: Աղճատված հավասարակշռության կետում արտադրողի հարաբերական գների p_x/p_y ուղիղը շոշափում է արտադրական հնարավորությունների սահմանը, իսկ սպառողի հարաբերական գների q_x/q_y ուղիղը՝ անտարբերության կորը: Հարկի պատճառով Y -ը սպառողների համար ավելի թանկ է, քան նրա արտադրության ծախսն է, իսկ լրավճարման հետևանքով X -ը սպառողների համար ավելի էժան է, քան նրա արտադրության ծախսն է:

Ասվածից բնավ պետք չէ եզրակացնել, թե բոլոր հարկերը կամ լրավճարները վատ ազդեցություն են թողնում: Նախ՝ հարկերի միջոցով կառավարությունը ապահովում է հանրային բարիքների արտադրությունը, որոնք այստեղ չեն դիտարկվում: Այնուհետև՝ ոչ բոլոր հարկերն են աղճատող ազդեցություն թողնում: Այսպես՝ ն՝ X -ի, ն՝ Y -ի վրա հավասար հարկ սահմանելու դեպքում սպառողի և արտադրողի հարաբերական գները կմնան հավասար և որևէ աղճատող ազդեցություն չի լինի: Բացի այդ՝ կառավարության գործունեությունը երբեմն ուղղված է առկա աղճատումների վերացմանը: Այսպես՝ եթե հարկը ուղղված է շրջակա միջավայրի աղտոտման սահմանափակմանը, ապա Գրաֆիկ 1-ը արտահայտում է հարկի ազդեցությունը արտադրության և առևտրի վրա, բայց այդ դեպքում անտարբերության կորերը ճիշտ չեն նկարագրի բարեկեցության փոփոխությունը: Ավելի քիչ աղտոտումից բարեկեցությունը բարձրանում է (այսինքն՝ կա նաև երրորդ ապրանքը՝ միջավայրի որակը, որը գրաֆիկում պատկերված չէ):

Փոքր բաց տնտեսություն


Ենթադրենք՝ A երկրի համար միջազգային գները տրված են: Ենթադրենք նաև՝ միջազգային հարաբերական գինը հավասար է A երկրի ավտարկիկ հարաբերական գնին:

$$(6) \quad \frac{p_x}{p_y} = \frac{p_x^*}{p_y^*}$$

Հետևաբար՝ այդ միջազգային հարաբերական գնի դեպքում A -ն շահագրգռված չէ առևտուր անել (Գրաֆիկ 2): Այս ենթադրության նպատակը առևտուրը պայմանավորող բոլոր մյուս գործոնների չեզոքացումն է: Գրաֆիկ 2-ում Q -ն ինչպես ազատ առևտրի, այնպես էլ ավտարկիայի դեպքում արտադրության հավասարակշռությունն է:

Բաց տնտեսությունում հարկի կամ լրավճարի ազդեցությունը, կախված նրանից՝ արտադրողի, թե սպառողի վրա է այն սահմանված, էապես տարբեր է: Փակ տնտեսության դեպքում ազդեցությունը նույնն է, քանի որ յուրաքանչյուր ապրանքի համար արտադրությունը հավասար է սպառմանը: Այնինչ ազատ առևտրի դեպքում սպառումը տարբերվում է արտադրությունից և, հետևաբար, տարբերություն կա՝ արտադրության, թե սպառման համար է հարկ սահմանվում կամ լրավճար տրամադրվում:

Գրաֆիկ 2:
 Սպառման հարկը կամ լրավճարը փոքր
 բաց տնտեսությունում



Սպառման հարկի դեպքում սպառողները հարկ են վճարում ինչպես տեղական արտադրության, այնպես էլ ներմուծված ապրանքի համար: Իսկ եթե ապրանքը արտահանվող ապրանք է, ապա սպառման հարկը վճարվում է միայն արտադրության այն մասի համար, որը չի արտահանվում: Սպառման հարկի դեպքում արտադրողները առևտուր իրականացնում են միջազգային գներով: Y -ի վրա սպառման հարկի դեպքում սպառողի, արտադրողի և համաշխարհային գների միջև կապը հետևյալն է.

$$(7) \quad \frac{q_x}{q_y} = \frac{p_x}{p_y(1+t)} = \frac{p_x^*}{p_y^*(1+t)} \Rightarrow (1+t) \frac{q_x}{q_y} = \frac{p_x}{p_y} = \frac{p_x^*}{p_y^*}$$


Այսինքն՝ արտադրողի հարաբերական գինը հավասար են միջազգային հարաբերական գնին: Y -ի վրա սպառման հարկի ազդեցությունը ցույց է տրված Գրաֆիկ 2-ում: Հարկի սահմանումից հետո արտադրողները կշարունակեն արտադրել Q -ում, որում միջազգային հարաբերական գինը, որը հավասար է արտադրողի հարաբերական գնին, շոշափում է արտադրական հնարավորությունների սահմանը: Սպառման կետը պետք է գտնվի միջազգային հարաբերական գնի ուղղի վրա: Մասնավորապես՝ այն կետում, որում անտարբերության կորը շոշափում է սպառողի հարաբերական գնին: Գրաֆիկ 2-ում դա C կետն է:

Այսպիսով՝ սպառման հարկը, բնականաբար, արտադրության վրա չի ազդել, սակայն կրճատել է Y -ի սպառումը: Սպառողները ավելի թանկ ապրանքը փոխարինել են ավելի էժան ապրանքով: Գրաֆիկ 2-ից հետևում է, որ սպառման հարկի դեպքում ընդհանուր բարեկեցությունը նվազում է, քանի որ սպառման նոր կետը գտնվում է ավելի ցածր անտարբերության կորի վրա: Ընդհանուր դեպքում, սակայն, պարտադիր չէ, որ բարեկեցությունը նվազի. բենզինի սպառման վրա հարկ սահմանելու դեպքում դրական ազդեցությունը նրանում է, որ միջավայրի աղտոտումը և երթևեկության խցանումները նվազում են:

Այժմ դիտարկենք Y -ի արտադրության վրա հարկի կամ որ նույնն է՝ X -ի արտադրության համար լրավճարի սահմանման ազդեցությունը (Գրաֆիկ 3): Այս դեպքում սպառողի, ոչ թե արտադրողի հարաբերական գինն է հավասար միջազգային հարաբերական գնին.

$$(8) \quad \frac{p_x}{p_y(1+t)} = \frac{q_x}{q_y} = \frac{p_x^*}{p_y^*}$$

Գրաֆիկ 3:
Արտադրության հարկը կամ լրավճարը
փոքր բաց տնտեսությունում



Գրաֆիկ 3-ում հարկի (լրավճարի) սահմանումից հետո արտադրությունը տեղաշարժվում է M կետ: Սպառումը պետք է իրականացվի M կետով տարված միջազգային հարաբերական գնի ուղղի վրա: Սպառման կետը՝ C , անտարբերության կորի և միջազգային հարաբերական գնի ուղղի շոշափման կետն է:


Այսպիսով՝ արտադրության հարկը կրճատում է Y -ի արտադրությունը և՛ ընդլայնում X -ի արտադրությունը: Գրաֆիկներ 2-ը և 3-ը ցույց են տալիս, որ կառավարության քաղաքականությունը, մասնավորապես՝ հարկերն ու լրավճարները, կարող են հանդիսանալ առևտուրը պայմանավորող գործոն, սակայն, աղճատումներով պայմանավորված առևտուրը բարեկեցությունը նվազեցնում է, ոչ թե՛ ընդլայնում:

Նկատենք՝ արտադրության և սպառման հարկերը (լրավճարները) առևտրի վրա տրամագծորեն տարբեր ազդեցություն են թողնում: Y -ի սպառման հարկը կրճատում է ներքին սպառումը և, հետևաբար, նպաստում է Y -ի արտահանմանը: Իսկ Y -ի արտադրության հարկը կրճատում է արտադրությունը և, հետևաբար, նպաստում է Y -ի ներմուծմանը:

Երկու միանման երկրներ

Ենթադրենք՝ երկու երկրները միանման են, այնպես, որ Գրաֆիկ 1-ում Q կետը միաժամանակ երկու երկրի համար էլ նկարագրում է ն՛ ազատ առևտրի, և՛ ավտարկիայի հավասարակշռությունը: Այնուհետև A երկիրը սահմանում է սպառման հարկ Y -ի վրա կամ որ նույնն է՝ սպառման լրավճար X -ի համար: Քանի որ միջազգային հարաբերական գինը նույնն է, ապա B երկիրը կշարունակի արտադրել և սպառել Q կետում (Գրաֆիկ 2), իսկ A երկիրը, արտադրելով Q կետում, կցանկանա սպառել C կետում: Նման իրավիճակում

Գրաֆիկ 4:
Երկու միանման երկրներ, երբ
երկրներից մեկում սահմանված է
սպառման հարկ կամ լրավճար



միջազգային շուկան չի կարող հավասարակշռվել, քանի որ առկա է X -ի չբավարարված պահանջարկ և Y -ի ավելցուկային առաջարկ: Միջազգային հարաբերական գինը պետք է բարձրանա՝ մինչև առաջարկն ու պահանջարկը հավասարակշռվեն: Արդյունքը պատկերված է Գրաֆիկ 4-ում: Երկու երկրներն էլ արտադրում են M կետում, քանի որ երկրները միանման են, իսկ միջազգային հարաբերական գինը երկուսի համար էլ նույնն է: B երկիրը սպառում է C_B կետում, իսկ A երկիրը՝ C_A կետում: Դարձյալ՝ A երկիրը հարկ սահմանելու միջոցով ստեղծեց առևտուր, բայց այդ առևտուրը իր համար բարենպաստ չէ: Այնինչ B երկիրը հայտնվեց ավելի բարենպաստ վիճակում:


Խնդիրը կարելի է դիտարկել նաև այլ տեսանկյունից: Ենթադրենք A երկիրը ավտարկիայում սահմանում է հարկ կամ լրավճար և այնուհետև՝ առևտուրը ազատականացնում: Արդյո՞ք A երկիրը շահում է: Այսինքն՝ արդյո՞ք C կետը Գրաֆիկ 2-ում կամ C_A -ն Գրաֆիկ 4-ում ավելի բարձր անտարբերության կորի վրա է գտնվում, քան E կետը Գրաֆիկ 1-ում: Ինչպես հիմնավորում է *երկրորդ լավագույնի տեսությունը*, երբ տնտեսությունում արդեն իսկ առկա է աղճատում, ապա ազատ առևտուրը կարող է նվազեցնել բարեկեցությունը:

Ըստ երկրորդ լավագույնի տեսության՝ մեկ աղճատման (առևտրի արգելք) վերացումը, երբ առկա է մեկ այլ աղճատում (հարկեր կամ լրավճարներ) անհրաժեշտաբար չի բարելավում բարեկեցությունը: Եվ հակառակը, երկրորդ աղճատումը (առևտրի արգելք), երբ արդեն իսկ առկա է առաջին աղճատումը (հարկեր և լրավճարներ) անհրաժեշտաբար բարեկեցությունը չի նվազեցնում:

Գրաֆիկ 4-ում E կետը (համապատասխանում է Գրաֆիկ 1-ի E կետին) ավելի ցածր անտարբերության կորի վրա է, քան C_A -ն, բայց դա, ինչպես հիմնավորում է երկրորդ լավագույնի տեսությունը, պարտադիր չէ:

Այժմ ենթադրենք՝ A երկրում սահմանվում է Y -ի արտադրության հարկ (կամ X -ի արտադրության համար տրվում է լրավճար): Սկզբնական վիճակը ցույց է տրված Գրաֆիկ 3-ում: B երկիրը ցանկանում է արտադրել և սպառել Q կետում, իսկ A երկիրը ցանկանում է արտադրել M կետում, բայց՝ սպառել C կետում: Դարձյալ միջազգային շուկան հավասարակշռված չէ, քանի որ առկա է X -ի ավելցուկային առաջարկ և Y -ի չբավարարված պահանջարկ: Միջազգային հարաբերական գինը պետք է նվազի, որի արդյունքում B երկիրը կարտահանի Y և կներմուծի X : Արդյունքում B երկիրը կարտադրի L կետում և կսպառի C_B կետում (Գրաֆիկ 5): Իսկ A երկիրը արտադրում է K կետում, սպառում է C_A -ում: Դարձյալ՝ արտադրության վրա հարկը կամ լրավճարը պայմանավորում է առևտուր, բայց այդ առևտուրը բարեկեցությունը բարելավող չէ: Բացի այդ, ինչպես նախորդ դեպքում, B երկիրը

Գրաֆիկ 5:
Երկու միանման երկրներ, երբ երկրներից մեկում սահմանված է արտադրության հարկ կամ լրավճար



շահում է:

Բերված օրինակում E կետում (ավտարկիայի հավասարակշռությունում) բարեկեցությունը ավելին է, քան C_A կետում (ազատ առևտրի հավասարակշռությունում): Սակայն, ինչպես նշել ենք, դա պարտադիր չէ:

Ռեսուրսների շուկաների աղճատում

Ռեսուրսների հարկման ազդեցությունը նշանակալիորեն տարբերվում է ապրանքների հարկման ազդեցությունից: Ռեսուրսների շուկայի աղճատման կոնկրետ տարբերակը, որը կդիտարկենք, կապիտալի եկամտի վրա հարկն է: Կդիտարկենք Հեկշեր-Օհլին տիպի մոդել: Ենթադրենք՝ հարկը սահմանվում է ռեսուրսներից մեկի վրա՝ (կապիտալի վրա) արտադրության ճյուղերից մեկում (Y ճյուղում):


X -ի արտադրությունում կապիտալի վճարը կազմում է r , իսկ Y -ի արտադրությունում՝ $r(1+t)$, որտեղ t -ն հարկադրույթն է: Ռեսուրսների հարաբերական գինը արտադրության երկու ճյուղերի համար կլինի.

$$(9) \quad \left[\frac{w}{r} \right]_x > \left[\frac{w}{r(1+t)} \right]_y$$


Գրաֆիկ 6-ը ցույց է տալիս ռեսուրսների բաշխումը Էջվորֆ-Բոուլի արկղում: Q -ն սկզբնական հավասարակշռության կետն է: Հարկի սահմանումից հետո արտադրության երկու ճյուղերում ռեսուրսների հարաբերական գները սկսում են տարբերվել: Նոր հավասարակշռությունը հաստատվում է G կետում, որում X -ի իզոքվանտը ավելի ուղղաձիգ է, քան Y -ի իզոքվանտը: G կետը Պարետո օպտիմալ չէ: Հետևաբար՝ արտադրական հնարավորությունների տիրույթում G -ն համապատասխանում է այնպիսի կետի, որը չի գտնվում արտադրական հնարավորությունների սահմանի վրա:

Միավորենք բոլոր այն կետերը, որոնցում իզոքվանտների թեքման անկյունների տարբերությունը նույնն է, ինչ-որ G կետում. կստանանք ռեսուրսների բաշխման աղճատված կորը՝ $O_x G O_y$: Գրաֆիկ 7-ը ցույց է տալիս համապատասխան արտադրական հնարավորությունների սահմանները: Ակնհայտ է, որ ռեսուրսի հարկման արդյունքում արտադրությունը այլևս չի իրականացվում արտադրական հնարավորությունների *արդյունավետ* սահմանի վրա: Նկատենք, որ Գրաֆիկ 7-ի G կետը համապատասխանում է

Գրաֆիկ 6:
Արտադրության
անարդյունավետությունը մեկ
ճյուղում մեկ ռեսուրսի
հարկման հետևանքով



Գրաֆիկ 7:
 Աղճատված արտադրական
 հնարավորությունների սահմանը և
 ավտարկիայի հավասարակշռությունը
 ռեսուրսի հարկման դեպքում



Գրաֆիկ 6-ի G կետին:


Գրաֆիկ 7-ում Q-ից G կետ անցումը դեռևս հավասարակշռությունը չի վերականգնում: Պատճառը հետևյալում է. G կետում աղճատված արտադրական հնարավորությունների սահմանի թեքման անկյունը հավասար է Y-ի արտադրության «իրական» այլընտրանքային ծախսին, այսինքն՝ «իրական» սահմանային ծախսերի հարաբերությանը: Բայց Y-ի արտադրության «մասնավոր» սահմանային ծախսը ավելին է, քան «իրական» սահմանային ծախսը, քանի որ Y արտադրողները պետք է վճարեն նաև կապիտալի հարկը: X-ի արտադրության «իրական» և «մասնավոր» սահմանային ծախսերը նույնն են, քանի որ X-ի արտադրությունում հարկ չկա: Նշանակենք՝ MRT_d -ով աղճատված արտադրական հնարավորությունների սահմանի տրանսֆորմացիայի սահմանային գործակիցը, MC -ով՝ «մասնավոր» սահմանային ծախսը, MC^* -ով՝ «իրական» սահմանային ծախսը: Քանի որ $MC_x^* = MC_x$ և $MC_y^* = MC_y$, ապա Y-ի արտադրությունում կապիտալի վրա հարկի հետևանքով ունենք՝

$$(10) \quad MRT_d = \frac{MC_x^*}{MC_y^*} > \frac{MC_x}{MC_y} = \frac{p_x}{p_y}$$

Կատարյալ մրցակցային շուկայում «մասնավոր» սահմանային ծախսերի հարաբերությունը հավասար է գների հարաբերությանը: Հավասարում 10-ից հետևում է, որ $MRT_d > p_x/p_y$, որտեղ p_x/p_y -ը արտադրողի գների հարաբերությունն է: Արտադրողի գների հարաբերությունը հավասար է սպառողի գների հարաբերությանը, երբ թողարկման վրա հարկեր չկան: Գրաֆիկ 7-ում վերջնական հավասարակշռությունը պետք է հաստատվի C կետում, որտեղ անտարբերության կորը ավելի հարթ է, քան աղճատված արտադրական հնարավորությունների սահմանը: Այսպիսով՝ ռեսուրսի վրա հարկի դեպքում ի հայտ են գալիս երկու աղճատում. մեկը՝ արտադրական հնարավորությունների սահմանը արդյունավետ չէ, մյուսը՝ օպտիմալ կետում անտարբերության կորը չի շոշափում արտադրական հնարավորությունների սահմանը:

Գրաֆիկ 8-ը պատկերում է կապիտալի հարկի ազդեցությունը համաշխարհային առևտրի հավասարակշռության վրա: Ավտարկիայի սկզբնական հավասարակշռությունը երկու երկրներում էլ Q կետում է: Երբ A երկիրը սահմանում է հարկ կապիտալի վրա, ապա, ինչպես նկարագրված է Գրաֆիկ 7-ում ավտարկիայի հավասարակշռությունը տեղափոխվում է C կետ և A երկիրը արտադրում ու սպառում է այդ կետում: Քանի որ հարկի հետևանքով Y-ի արտադրությունը կրճատվում է, ապա Y-ի գինը բարձրանում է: B երկիրը շահում է գնի այս

Գրաֆիկ 8:
 Երկու միանման երկրներ, երբ A
 երկրում սահմանված է կապիտալի
 հարկ



փոփոխությունից. B -ի արտադրությունը տեղաշարժվում է L կետ և B -ն A է արտահանում Y , ներմուծում է X և սպառում է C_B կետում: A երկրի արտադրությունը տեղաշարժվում է K կետ, իսկ սպառումը՝ C_A կետ: A երկիրը ակնհայտորեն տուժում է՝ չաղճատված ավտարկիայի (և ազատ առևտրի) Q կետի հավասարակշռության համեմատ: A -ն կարող է կա՛մ կորցնել, կա՛մ շահել աղճատված ավտարկիայի C կետի հավասարակշռության համեմատ: Գրաֆիկ 8-ում պատկերված տարբերակում A -ն տուժել է նաև այդ առումով:

Այսպիսով՝ ռեսուրսի հարկումը պայմանավորում է առևտուր, սակայն այդ առևտուրը բարեկեցությունը չի բարձրացնում: